ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Մարտի 10-ին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղանի հրավերով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ գրասենյակի գործընկեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համատեղ ժողով:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նախաձեռնությամբ ստեղծված Կլոր Սեղանն արդեն 6 տարի համագործակցում է հայաստանյան թեմերի, ինչպես նաև հասարակական ավելի քան 20 կազմակերպությունների հետ: Կլոր Սեղանի դրամաշնորհներով բոլոր այս կազմակերպություններն իրականացնում են սոցիալական, կրթական և գյուղատնտեսական ծրագրեր՝ նպաստելով երկրի զարգացմանը:

Ժողովի ընթացքում ԵՀԽ ԿՍ գրասենյակի տնօրեն Կարեն Նազարյանը ներկայացրեց Կլոր Սեղանի կատարած աշխատանքները և առաջիկայում իրականացվելիք ծրագրերը, ապա անդրադարձավ այն արդյունավետ փոխհամագործակցությանը, որ իրականացվում է Հայաստանյայց Եկեղեցու, Կլոր Սեղանի, Հայաստանի և արտերկրի այլ հասարակական կազմակերպությունների միջև: ՀԿ-ների ներկայացուցիչները միմյանց ներկայացրեցին գործունեության իրենց ծրագրերը և քննեցին համագործակցության հետագա հեռանկարներն ու ակնկալիքները:

Ժողովականներին հանդիպեց և իր օրհնությունը տվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Շնորհավորելով արձանագրված հաջողությունների համար՝ Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց ԵՀԽ ԿՍ աշխատակիցների գործունեությունը, նվիրումն ու նախանձախնդիր ծառայությունը: Հայոց Հայրապետն անդրադարձավ նաև հասարակական կազմակերպությունների առաքելությանը՝ նշելով. «Բարեգործություն կատարելով՝ մեր ժողովրդի հոգում բարեգործության ոգի եք սերմանում»:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը ներկայացրեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու գործունեությունը կրթական, մշակութային և սոցիալական ոլորտներում, ապա պատասխանեց ներկաների հարցերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ